9161

Բոլոր յերկրների, միացեք

ԿՈՒՍՈՐԴԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

# ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՍԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՆԱՎԹԻ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ЗКП5
Բ-13

ԿՈՒՍՀՐԱՏ
Բաքու—1934

ՍՍՀՄ—ССРА

ЗКПБ
Բ-13
26 NOV 2009
24 SEP 2009
26 NOV 2009
10819

Ա.Կ.Կ.(բ) Կ. ԶԵԿԱՎԱՐ ԿՈՒՍՈՐԴԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

# ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՍԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՆԱՎԹԻ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

(Աղրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի քարտուղար ընկ. Մ. Զ. Բագիրովի՝ կուսկոմների քարտուղարների և կուսկազմակերպիչների ընդհանուր Բագվի կոնֆերանսում ունեցած յելույթից)։

1007
128857
202
#533

1934

ԿՈՒՍՀՐԱՏ
Բաքու

2 6 FEB 2013

9161

Հայերենը խմբագրեց՝ Ս. ՇԱԽՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

3238-91

Baş Mətbuat Mydilligi Myvəkkilligi № 5772. Firqənəş №385. Sifariş № 849. F9; Tiraz 1000. Istehsalata verilmir 13/VII-34. Capa imzalanmış 16/VII-34. Cap listi 2. Kağız formatı 62+94. Azərnəşr mətbəəsində basıldı. 26-lar adına "Kitab Sarajı", Bakı, Əli Bajramov kücəsi.

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՍԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՆԱՎԹԻ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

(Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի յեվ Բագկոմի քարտուղար ընկ. Մ. Զ. Բագիրովի՝ կուսկոմների քարտուղարների յեվ կուսկազմակերպիչների ընդհանուր Բագվի կոնֆերանսում ունեցած յելույթից):

*Մենք այսոր հրավիրել ենք մեր կազմակերպության ղեկավար ակտիվը, վորպեսզի մաքերի փոխանակություն կատարենք, թե ինչպես ավելի լավ կերպով կատարենք Կագանովիչի անվան նավթահանքի ղեկուցման առթիվ կուսակցության Յերկկոմի կայացրած վորոշումը՝ կուսակցական-մասսայական աշխատանքի դրության մասին։ Կուսակցական կազմակերպության հրամկազմի ժողովում, հարկավոր է խիստ, անկեղծորեն խոսել աշխատանքի բոլոր թերությունների մասին, վո-*

րոնց մեղավորներն ամենից առաջ մենք ենք ձեզ հետ միասին, որոնց, առաջին հերթին՝ ուղղված է կուսակցության Յերկկոմի որոշումը և որոնք պատասխանատվություն են կրում կուսակցական աշխատանքի դրության համար։

Չի կարելի ասել, որ մեզ մոտ քիչ ենք խոսել կուսակցական-մասսայական աշխատանքի դրության մասին և նրա վերակառուցման մասին, բայց միևնույն ժամանակ մեր կուսակցական ակտիվի մեջ-կան ընկերներ, որոնք բավականաչափ պարզորեն չեն պատկերացնում իրենց կուսակցական աշխատանքի նշանակությունը, նրա ուժն ու դերը՝ կուսակցության և կառավարության առաջադրանքների կատարման համար մղվող պայքարում։

Դրա համար էլ, Կագանովիչի անվան նավթահանքի կուակոմի զեկուցման առթիվ կուսակցության Յերկկոմի արած յեզրակացությունները վերաբերվում են ոչ միայն այդ նավթահանքին, ոչ միայն նավթային շրջանների կուսակցական կազմակերպություններին, այլ և ամբողջ Բագվի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպությանը։

Պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կուսակցության ունեցած դերի կլասիկ բնորոշումը տվել է ընկ. Ստալինը. «կուսակցությունը պրոլետարիատի կազմակերպության բարձրագույն ձևն է, կուսակցությունը պրոլետարների դասակարգի ներսում յեվ այդ դասակարգի կազմակերպությունների մեջ հիմնական ղեկավար սկիզբն է հանդիսանում»։

Յեվ յեթե այսոր մենք նավթի պլանի չկատարումը կապում ենք կուսակցական աշխատանքի վատ դրության հետ, ապա այդ միանգամայն հասկանալի և անպայման ճիշտ է։ Բանի որ վատ է ղեկավարությունը, կուսակցական աշխատանքի ծավալումը, ապա վատ է և նավթային պլանի կատարումը։

Կուսակցական աշխատանքն ընդգրկում է տարացիորեն մեր աշխատանքի ամբողջ սիստեմը, նրա յուրաքանչյուր առանձին տեղամասը։ Յերբ խոսք է լինում նավթի ֆրոնտում կուսակցական աշխատանքի մասին, դրա տակ

պետք է հասկանալ և՛ արտադրական խնդիրները, և՛ արհմիութենական աշխատանքը, և՛ կոմյերիտական, և՛ կուլտուրական-դաստիարակչական աշխատանքը, և տեխնիկական ուսուցումը, և՛ թե ճաշարանների, բանմատաքաժինների, կոմունալ ձեռնարկությունների, ոժանդակ ձեռնարկությունների աշխատանքը, մի խոսքով,—բոլոր այն կազմակերպությունների աշխատանքը, որոնք կապված են մեր նավթային արդյունաբերության կյանքի հետ։

Բոլորովին ճիշտ չէ, սխալ է՝ կուսակցական աշխատանքը հանդեցնել միայն խմբակներ կազմակերպելու, կուսորեր անցկացնելու և անդամավճարներ մուծելու գործին, ինչպես այդ անում են առանձին ընկերներ։ Իսկ յերբ հարցնում ես նրանց, թե կրճատվել է արդյոք ավարիաների թիվը, վերացված են պարապուրդները, վերացված են պրոդուլները և արտադրական ու կուսակցական դիսցիպլինայի խախտումները, վերջ եք տվել արդյոք նավթի կորուստներին նավթահանքում, ծավալել եք արդյոք կուլտուրական աշխատանք հորում և



նավթահորում, կատարվում է պլանը ծավալուն աշխատանքի հիման վրա, ապա վորպես պատասխան կլսես.

—Վոչ, դրան մենք դեռ չենք հասել։

Այս ցույց է տալիս, վոր շատ ընկերներ դեռ բավականաչափ չեն պատկերացնում, վոր առանց տվյալ ձեռնարկության տնտեսական կյանքի հետ կուսակցական աշխատանքի կոնկրետ կենդանի կապի, առանց տվյալ ձեռնարկության աշխատանքի բոլոր ուղղությունների վերաբերյալ լավ ցուցանիշների—կուսակցական աշխատանքի վոչ մի վերակառուցման մասին խոսել չի կարելի։ Կուսաշխատանքի վերակառուցման հիմնական ցուցանիշը պետք է լինեն տնտեսական ցուցանիշները։ Կուսաշխատանքի բովանդակությունը այն բոլոր հարցերի գումարն է, վորոնք դրված են այս կամ այն կազմակերպության առաջ, այս կամ այն տնտեսական ձեռնարկության առաջ։

Կուսակցական-մասսայական աշխատանքը մեզ մոտ վատ է դրված, նրա նշանակությունը շատ կուսաշխատողների կողմից թերագնահատվում է։ Այս մասին բավականաչափ պարզ կեր-

պով ասված հնավթի վերաբերյալ Համկոմկուսի (բ) Կենտկոմի մայիսի 15-ի վորոշման մեջ.—

«Նշելով կուսակցական - մասսայական աշխատանքի դեռևս անբավարար ծավալումն անմիջապես նավթահանքերում, Համկոմկուսի (բ) Կենտկոմը պարտավորեցնում է Համկոմկուսի (բ) Անդրյերկոմին, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բագկոմին՝ ծավալել կուսակցական-մասսայական աշխատանքը բանվորների և ինժեներա տեխնիկական աշխատողների մեջ՝ նավթի հանույթի պլանների անպայման կատարման և նախատեսված վերակազմակերպման ամենաարագ ավարտման հարցերի շուրջը, միաժամանակ ամենավճռական պայքար մղելով հետադիմական տրամադրությունների և վերակառուցմանն ուղղված հակագործողությունների դեմ»։

Ադնավթի վերակառուցման մասին կուսակցության Ցերկկոմի վորոշումից հետո, ընկ. Բերիան իր նամակում բագվեցիներին գրել է. «պետք է շարժուն դրության մեջ դնել ամբողջ կազմակերպությունը, բարձրացնել յուրաքանչյուր բանվորի ակտիվությունը»։

Պարզ է, վոր ամբողջ կազմակերպությունը շարժուն դրության մեջ դնել, բարձրացնել յուրաքանչյուր կոմունիստի և յուրաքանչյուր բանվորի ակտիվությունը կարելի է միայն կուսակցական կազմակերպության միջոցով՝ կուսակցական - դաստիարակչական բացատրական աշխատանքը ուժեղացնելու ուղիով։

Ադնավթի վերաբերյալ Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման մասին, Անդրյերկկոմը մայիսի 21-ին, ընկ. Բիրիայի հաղորդման համաձայն, մատնանշել է կուսակցական - մասսայական աշխատանքի զգալիորեն հետ մնալը նավթահանքերում այն խնդիրներից, վորոնք ծառացած են Բագվի կազմակերպության առաջ նավթի համար մղվող պայքարում։ Ցերկկոմն արձանագրել է.

«Կուսակցական աշխատանքի պրակտիկայում մինչև հիմա գոյություն ունեն գործամոլության տարրեր, քաղաքական - դաստիարակչական աշխատանքի թույլ ծավալում

մասսաների մեջ, անբավարար զգոնություն կուսակազմակերպությունների առանձին ղեկներում, դիֆերենցիացիայի յենթարկված աշխատանքի բացակայություն առանձին նավթահանքերի և բանվորների հետ։ Կոմունիստների զգալի մի խումբ իսկական ավանգարդային դեր չի խաղում արտադրության մեջ։ Առանձին կոմունիստներ, կատարելով և գերակատարելով իրենց տրված արտադրական առաջադրանքները, չեն հանդիսանում՝ սոցիալիստական մրցության հիման վրա՝ իրենց շրջապատող անկուսակցական բանվորների մասսաներն իրենց յետևից տանող կազմակերպիչներ»։

Այդ նշանակում է, որ կուսակցության շրջկոմների ոպերատիվ, կոնկրետ, կենդանի ղեկավարությունը բավարար չի։ Բավարար չի նաև Ադրկոմկուսի (բ) կենտկոմի և Բագկոմի ապարատի ղեկավարումը՝ շրջանային և ըստորին կուսակցական ողակներին։

Այս՝ բոլշեվիկյան շիտակությամբ նշվել է ընկ. Բերիայի կողմից նրա յեզրափակման յելույթում՝ կուսակցության Յերկկոմի յերկրորդ պլենումում։

Խոսքն այն մասին չէ, որ այս կամ այն աշխատողը լավ կամ վատ է աշխատել, այլ այն մասին, որ մենք բոլորս ել դեռ վատ ենք աշխատում։ Այս կատարվում է նրա համար, որ սովորած լինելով քննադատել ուրիշներին, մենք, մինչև այժմ, չենք սովորել տեսնել մեր սեփական սխալները, խիստ քննադատել մեր թերությունները և, քննադատելով դրանց, ուղղել գործի ընդհանուր դրությունը։

Միանգամայն ճիշտ են անում Համկոմկուսի (բ) կենտկոմը, Անդրյերկոմը և ընկ. Բերիան, յերբ բոլշեվիկյան խստությամբ ցույց են տալիս մեր սխալները։ Մենք անուղղելի սխալ կը-կատարեցինք, յեթե չոգտագործենք այդ ցուցումները խիստ ու արմատական բեկման և կազմակերպչական-կուսակցական աշխատանքի վերելքի ու նավթի համար տարվող պայքարի ղեկավարության ամբողջ սիստեմի բարելավման համար։

Դատելով ըստ Արայոմի կղզու աշխատանքի դրության ստուգման հանրագումարների, մենք մինչև այսոր ել

չենք կարողացել լիովին ոգտագործել այն հզոր լծակը, որպիսին է Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Ցերկկոմի որոշումը՝ Աղնեվթի աշխատանքի վերակառուցման մասին։ Մենք չենք կարողացել Բագվի բոլշեվիկների, Բագվի նավթագործների ամբողջ բանակի ցասումը բարձրացնել այն բոլոր թերությունների դեմ, որոնք խանգարում են նավթային պլանի կատարմանը։

Մեր կուսակցության Կենտկոմի որոշումն Աղնեվթի աշխատանքի մասին՝ ջերմ արձագանք գտավ Լենինի քաղաքի, Սորմովի և Աղնեվթին սպասարկող այլ մեքենաշինական կենտրոնների պրոլետարների և բոլշեվիկների մեջ։ Մեքենագործները սկսել են ոչ միայն կատարել իրենց պարտավորությունները՝ նավթային տնտեսությունը սարքավորումներով մատակարարելու գծով, այլ և պլանից դուրս սարքավորումների հատուկ եղելոններ են կազմակերպում Ադրբեջանի նավթային արդյունաբերության համար։ Իսկ մենք շարունակում ենք քայլել տեղում և կարմրել ամբողջ յերկրի և կուսակցության առաջ՝ նավթային պլանը չկատարելու համար, հայտարարելով միևնույն ժամանակ, որ մենք վերակառուցվում ենք կամ, որ մենք արդեն վերակառուցել ենք կուսակցական աշխատանքը։

Թվում եր թե, Աղնեվթի վերակառուցման մասին Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Ցերկբային Կոմիտեյի որոշումը նախ և առաջ ու ամենից առաջ մեզ մոտ—բագվեցիներիս, ադրբեջանցիներիս մոտ պետք եր տգնապ առաջացներ։ Թվում եր, թե այդ որոշումներին մենք պետք է պատասխանեյինք ավելի առաջ, քան պատասխանեցին Լենինգրադի բոլշեվիկները և պրոլետարները, և պատասխանեյինք բոլշևիկորեն խիստ արմատական բեկումով՝ պարտքը ծածկելու, պլանը կատարելու համար մղվող պայքարում։

Լենինգրադի բոլշեվիկներն Աղնեվթի աշխատանքի մասին Համկոմկուսի (բ) Կենտկոմի որոշմանն արձագանք տալով՝ մեր առաջ նոր պարտավորություններ, նոր պահանջներ են դնում։

Ցեռ հարց եմ տալիս այստեղ նստած բոլոր շրջկոմների քարտուղարներին, թե ինչ պատասխան են պատրաստում

նրանք լենինգրադցիներին, թե ինչ են անում նրանք մեր Լենինգրադի յեղբայրներին, Կարմիր Սորմովի յեղբայրներին հավապատասխան բոլշևիկյան պատասխան տալու համար։ Մենք տեղում ենք քայլում միայն։ Դեռ ավելին։ Մի շարք նավթահանքերի գծով մենք աշխատանքի վատթարացում ունենք մայիս ամսվա համեմատությամբ։

Ահավասիկ առաջատար նավթահանքերի հանույթի թվերը։ Լենինյան նավթահանքը մայիսին պլանը կատարել է 104 տոկոսով, իսկ այժմ ընթանում է 94-96 տոկոսի մակարդակի վրա։ Որջոնիկիձեյի անվան նավթահանքը մայիսին պլանը կատարել է 104,6 տոկոսով, իսկ այժմ ընթանում է 102 տոկոսի մակարդակի վրա։ Ազիզբեկովի անվան նավթահանքը մայիսին ավել է պլանի 90 տոկոսը, իսկ այժմ ընթանում է 77-78 տոկոսի մակարդակի վրա։ Ճիշտ է, այնպիսի նավթահանքեր, ինչպիսիք են Մոլոտովի անվան, Լոկ-Բատանը, Ստալինյան, Կիրովի նավթահանքերը՝ աշխատում են եվ ավելի վատ, բայց առաջատարներին, առաջավորներին մենք միշտ բարձրացրած պահանջներ ենք ներկայացնում։ Դրա համար եվ Լենինյան նավթահանքին, վորը հինգ ամսվա ընթացքում գնացել է առաջից, առաջից գնացող Որջոնիկիձեյի անվան նավթահանքին, Ազիզբեկովի անվան, Ստալինի անվան նավթահանքերին ներկայացնում ենք ավելի լուրջ պահանջներ։ Ի՞նչ իրավունք ունեին այս նավթահանքերը յերկրին 1.200.000 տոնն ընդհանուր պարտքի դեպքում տեմպերը հանձնելու։ Ո՞վ է իրավունք ավել հետ մընացող նավթահանքերին, չնայելով այն ոգնության, վոր մենք ենք ցույց տալիս, վոչ եվ այն պահանջներին, վորոնք ներկայացնում են նրանց, քայլ առնել միևնույն տեղում։ Մինչև յերբ պիտի հանդուրժենք այն դրությունը, յերբ նավթահանքը սիստեմատիկաբար չի կատարում պլանը։

Մենք, ըստ յերևույթին, մոռացել ենք այն մասին, վոր մեր պատգամավորներն՝ ամբողջ յերկրի առաջ, ամբողջ կուսակցության առաջ, 17-րդ կուսակցական համագումարի ամբիոնից, խոստում են տվել յերկրին՝ կա-

տարելու 22 միլիոն տոննն նավթի պը-
լանը։ Մենք մոռացել ենք այն խոս-
տումները, վորոնք տվել ենք կուսակ-
ցության Անդրկովկասյան 7-րդ համա-
գումարում, Անդրկոմկուսի (բ) 12 ր դ
համագումարում, Բագվի բոլշևիկների
21-ր դ կոնֆերանսում։

Խոսելով կուսակցական աշխատանքի
վերակառուցման մասին, կուսակցա-
կան-մասսայական աշխատանքի դրու-
թյան մասին, մենք պետք է հաշվի
առնենք, վոր կուսակցական-մասսայա-
կան աշխատանքը կարևորագույն խընդ-
դիր է դնում—ամբողջ յերկրին, ամ-
բողջ կուսակցությանը տված մեր խոս-
տումի կատարումը։ Մինչդեռ այսոր
մենք չենք կատարել մեր պարտավո-
րությունները։

Մենք պետք է վորպես որինակ
վերցնենք մետալուրգիան, վորը շա-
բունակ նեղ տեղ է հանդիսացել Խոր-
հրդային Միության ժողովրդական
տնտեսության մեջ, իսկ հիմա պրո-
լետարների բանակի ջանքերով մետա-
լուրգիան առաջավոր շարքերն է ա-
ռաջ քաշվել։ Նրան պետք է հավա-
սարվենք մենք։



32387-91

Այժմ, չելյուսկինցիների հերոս-
ների և նրանց փրկող սավառնորդների՝
Խորհրդային Միության հերոսների
բարեհաջող կերպով Խորհրդային յեր-
կիր վերադառնալու պատվին, ամբողջ
յերկրում հարվածայնության և սոցիա-
լիստական մրցության բարձրագույն
ձևն է ծավալվել։ Լավագույն հարվածա-
յինների միջից միայն ամենալավերն
են արժանանում չելյուսկինցիներին ի-
բենց կոլեկտիվի անունից վողջունելու
իրավունքին։ Մեքենավարների լավա-
գույններից լավագույներն են իրավունք
ստանում վարելու չելյուսկինցիների
գնացքը Վլադիվոստոկից Մոսկվա։ Յեր
կաթուղային տրանսպորտի լավագույն
սլաքավարներն են պատիվ ձեռք բերում
բացելու չելյուսկինցիների գնացքի
ուղին։ Չելյուսկինցիների փրկելու գոր-
ծում անգնահատելի դեր է խաղացել
մեր կարմիր ավիացիան, հերոս սավառ-
նորդների սխրագործությունը, ինք-
նաթիռների ամրությունը, նյութի
վորակը, վորից դրանք կառուցված են,
մեր բենզինի վորակն ու քանակը։
Իսկ ինչ [illegible] ենք վողջու-
նել մեր [illegible] կատմության

ՍՍՀ. Գիտ. Ակադեմիայի
Գրք. Ողջ. Տեղամասերում
ՀԱՅԱՍ—ССРА
անվ. Ա. Մասիսյանի
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մեջ չտեսնված հրաշքներ կատարած հերոսներին։ Ի՞նչպես ենք կազմակերպել մենք արժանի արձագանքն այդ դեպքերին։ Նավթին վերաբերող մեր ցուցանիշները խոսում են վատ արտադրական աշխատանքի մասին, կուսակցական աշխատանքի վատ դրվածքի մասին։ Կուսակցական աշխատանքի ձևական վերակառուցումը, առանց աշխատանքի սիստեմի և մեթոդների ըստ էության վերակառուցման, առանց այն լցնելու լիարյուն բովանդակությամբ—դա վերակառուցում չէ, այլ շաղակրատություն է, վորը պետք չէ վոչ վոքի։

Համկոմկուսի (բ) Կենտկոմի պատմական վորոշումը Նավթի մասին, խոսում է Կենտկոմի՝ նավթային տնտեսության վերաբերմամբ ունեցած բացառիկ հոգատարության մասին։ Այդ վորոշումը խոսում է դեպի մեզ տածած բացառիկ ուշադրության ու ընկ. Ստալինի անձնական հոգատարության մասին։ Սակայն, մինչև հիմա, կրկնում եմ, մենք չենք կարողացել ոգտագործել բ՚ոլոր այն հնարավորությունները, վորը ներկայացնում է մեզ մեր կուսակցության Կենտկոմը, չենք կարողացել կատարել նրա պահանջները՝ կուսակցական-մասսայական աշխատանքն ուժեղացնելու մասին։

Մենք մինչև հիմա չենք կարողացել ոգտագործել ներքին կարգի ահագին ռեսուրսները։

Նավթահանքերի տեռիտորիան չի մաքրված,—այնտեղ յերբեմն անշարժ ընկած է և փչանում է պետական իրը, այն ժամանակ, յերբ նավթահանքերի ղեկավար աշխատողներից շատերը պլանի չկատարումը բացատրում են սարքավորումների բացակայությամբ։ Այս դեպքում առաջ են քաշում «սեզոնային» պատճառներ՝ մերթ խողովակներ են բացակայում, մերթ գազ, մերթ կոմպրեսորներ են պակասում, նասոսներ, իսկ յերբեմն էլ բացակայում է հենց կավը։

Ընկերները մոռանում են, վոր նրման պատճառաբանություններով յերկար չի կարելի ուղի գնալ։ Այն գործը, վորին ձեռնամուխ են յեղել այժմ Կագանովիչի անվան նավթահանքում—նավթահանքի ամբողջ տեռիտորիան

բիայի մանրաղնին ստուգումը և աբ-
ժեքավոր սարքավորումների հավա-
քումը՝ պետք է բոլոր գրուպաների,
բոլոր նավթահանքերի գործը դառնա։
Ահա կուսակցական աշխատանքի կոն-
կրետ բովանդակությունը, ահա կոնկը-
րետ հարց, որի շուրջը պետք է կազ-
մակերպել մասսաներին։ Ամբողջ կու-
սակցական և կոմսերիտական կազմա-
կերպությունը, բոլոր բանվորներին
մոբիլիզացիայի յենթարկել՝ ոգտագոր-
ծելու համար ներքին ռեսուրսները և
վերացնելու մոտակա որերում պլանի
կատարման ճեղքվածքը—ահա բոլոր
խնդիրների խնդիրը։

Բանվորներին պետք է իրազեկ պա-
հել մեր յերկրի ամբողջ կյանքին, ամ-
բողջ քաղաքականությանը, կապելով
այդ հարցերը նավթային պլանի կա-
տարման համար մղվող պայքարի հետ։

Կարելի՞ յե արդյոք խոսել Խորհը-
դային Միության դրության մասին,—
չկապելով այդ հարցը Խորհրդային
Միության պաշտպանության հետ։ Կա-
րելի՞ յե արդյոք խոսել Խորհրդային
Միության պաշտպանության մասին,
չխոսելով ժամանակակից տեխնիկայի,



տանկերի, ավտոմոբիլների, զրահա-
պատների, ավիացիայի մասին և այլն։
Յեվ, խոսելով այս բոլորի մասին չի
կարելի չխոսել միաժամանակ այն մա-
սին, թե ինչն է շարժման մեջ դնում
ժամանակակից պաշտպանության այդ
հզոր զենքերին՝ բենզինի, յուղերի մա-
սին և այլն։ Այստեղից էլ հենց պետք
է մոտենալ նավթային արդյունաբե-
ռության յուրաքանչյուր կոմունիստի,
յուրաքանչյուր բանվորի ամենորյա
խնդիրներին։ Ամբողջ հարցը նրանումն
է, թե ինչպես է մատուցվելու այս նյու-
թը, ինչպես է զեկուցողը պատրաստ-
վելու զեկուցման, թե հենց ինքն ինչ
չափով է պարզ պատկերացնելու իրեն
այն հարցը, որի մասին զեկուցում է։

Վերջին յերկու տարիների ընթաց-
քում բազմիցս որոշումներ են յեղել
այն մասին, որ անպատրաստված զե-
կուցողներ չուղարկվեն ձեռնարկու-
թյունները։

Իսկ մեզ մոտ զեկուցողը սովորաբար,
ասենք, միջազգային հարցի վերաբեր-
յալ՝ հապճեպ կերպով կթվարկի յեր-
կրները և, բավականանալով ընդհա-
նուր ֆրազներով, կվերջացնի նրանով,

վոր բոլորին կոչ կանի «մեռնել խոր-
հրդային իշխանության համար»։

Մինչդեռ, յեթե նույն այդ զեկու-
ցողը լուրջ կերպով պատրաստվեր յե-
լույթին և, սկսելով միջազգային հար-
ցերից, կարողանար մոտենալ հորի,
նավթահորի, ստանոկների կյանքին—
դա իսկապես արժեքավոր կլիներ և կը-
համապատասխաներ այն պահանջնե-
րին, վորոնք այսորվա որը ներկա-
յացվում են կուսակցական աշխատան-
քի համար։

Որերս վերջացավ Անդրյերկոմի պլե-
նումը, վորը քննեց գարնանային
ցանքի կամպանիայի հանրագումարնե-
րը և մշակման ու բերքահավաքի խընդ-
իրները, անասնապահության դրու-
թյունը և ապրանքաշրջանառության
ծավալման խնդիրները։

Ցանքի-կամպանիայի հանրագումար-
ների և բերքահավաքի խնդիրների
մասին պլենումի կայացրած վորոշում-
ների ուսումնասիրումը պետք է կապել
նավթի համար մղվող պայքարի հետ՝
այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր
կոմունիստի և անկուսակցական բան-
վորի գիտակցության մեջ արմատաց-



վի այն, թե ինչպես է նավթի պլանի
չկատարումը հարվածում բերքատվու-
թյան համար մղվող պայքարին։ Այս
հարցում կարելի յե և պետք է պար-
զաբանել գյուղական տնտեսության
մեքենացման (տրակտորների, կոմբայն-
ների, տրակտորային գութանների,
տրակտորային հնձիչների) դերն ու
նշանակությունը բերքատվության հա-
մար մղվող պայքարում և նավթային
արդյունաբերության բանվորների պար
տավորությունները՝ գյուղատնտեսա-
կան մեքենաները հեղուկ վառելիքով
մատակարարելու գործում։

Զեկուցումը, վորպեսզի ոգուտ տա
թե՛ գյուղական տնտեսությանը և թե՛
նավթին, հենց ինքը զեկուցողը պետք
է, ամենից առաջ, ճշտությամբ պարզի
իրեն համար, թե ինչ ենթակայացնում
իրենից ԱՊԽՀ-ի գյուղական տնտեսու-
թյունը, նրա մեքենացումը, բերքա-
տվության համար մղվող պայքարի յե-
ղանակները, գյուղական տնտեսության
մեջ բերքի համար տարվող պայքարի
փոխադարձ կապը՝ նավթային պլանի
կատարման համար տարվող պայքարի
հետ։ Բացատրել բանվորին, վոր

ավարիա կատարելով, նա վնաս է պատճառում յերկրին, նպաստում է բերքատվության իջեցմանը, իսկ դրանով ել նաև հումույթային բազայի թուլացմանը տեքստիլ արդյունաբերության մեջ, վորը մեր յերկրի բանվորների և կոլտնտեսականների համար մշակում է սպիտակեղեն և այլ նրանց անհրաժեշտ առարկաներ։

Պետք է կարողանալ ամեն մի ընդհանուր կարգի հարց կապակցել տվյալ կոմունիստի, բանվորի, կոմյերիտականի ամենորյա ընթացիկ աշխատանքի և խնդիրների հետ։ Դրա համար իրեն իսկ հարկավոր է ավելի խոհուն, ավելի լուրջ, բոլշեվիկորեն զբաղվել այդ հարցով։

Շրջկոմի քարտուղարը կուսակցական աշխատանքը պետք է իր ձեռքում պահի, լիովին չվստահելով այն իր տեղակալին, ինքը պետք է զբաղվի կուսակցական աշխատանքի հարցերով, աշխատելով և՛ իր վրա, և՛ նրանց վրա, վորոնց ղեկավարում է նա, ոգնելով նրանց, ցույց տալով, թե ինչպես և ինչ պետք է կարդալ



ինչպես հասկանալ, ինչպես ուսումնասիրել այս կամ այն նյութը։

Պետք է հիշել, վոր կուսակցական աշխատանքը—դա դժվարին, բարդ, համբերատար, խոհուն, ամենորյա սև աշխատանք է։

Սրա հետ անմիջապես կապված ծառանում է նաև կոմունիստի ավանգարդային դերը։ Լինել ավանգարդում՝ այդ նշանակում է իր յուրաքանչյուր ակտիվը, վարակելով իր որինակով, կազմակերպելով այդ ակտիվը՝ պայքարի հանելու նրան այս կամ այն խնդրի կատարման համար։

Ի՞նչպես հասնել այն բանին, վոր պեսզի կոմունիստն արտադրության մեջ ավանգարդային դեր խաղա։ Ամենից առաջ այդ կոմունիստն ինքը բավականաչափ պարզ պետք է պատկերացնի իրեն այն, թե ինչի՞ յե պարտավորեցնում կոմունիստի կոչումը, թե վորո՞նք են կոմունիստի դերն ու պարտականությունները։ Դրա համար նա բավականաչափ լավ պետք է իմանա կուսակցության կանոնադրությունը ու ծրագիրը, և վո՛չ միայն իմանա, այլ և կարողանա կիրառել դրանք

կյանքում, կարողանա բացատրել դրանք ուրիշներին։

Կուսակցության վորոշումների ուսումնասիրման և դրանք կատարելու համար մղած պայքարի հիման վրա, կոմունիստն ինքը վոչ միայն պետք է իր առաջադրանքների կատարման որինակը լինի, աշխատանքային արտադրական դիսցիպլինայի որինակը, այլ և կարողանա վարակել իր որինակով շրջապատող անկուսակցական բանվորներին։ Հաճախ մեզ մոտ, կուսակցության անդամների ավանգարդային դերի մասին յեղած շաղակրատության հետ միատեղ, մոռանում են այն անհրաժեշտության մասին, վորպեսզի կուսակցության բոլոր անդամները, վորպես մինիմում ուսումնասիրեն կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը։ Այդ մոռացումի մասին խոսում է կուսաշխատանքի դրությունը՝ Արայոմի կղզում և Կագանովիչի անվան նավթահանքում։

Կուսակցության կանոնադրության առաջին կետն ասում է. «Կուսակցության անդամ է համարվում յուրաքանչյուրը, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա մի վորևե կազմակերպության մեջ, յենթարկվում է կուսակցության վորոշումներին և մուծում է անդամավճարները»։

Քանի դու չգիտես կուսակցության կանոնադրությունը—քեզանից ել ինչ կուսակցության անդամ։ Իսկ մենք ցանկանում ենք, վոր նա դեռ ավանգարդային դեր ել խաղա։ Առանձին ընկերներ ջանում են ապացուցել, վոր իրենց մոտ կուսակցական աշխատանքը լավ է դրված. «կուսակցական որը մենք անց ենք կացրել, 17-րդ համագումարի վորոշումները քննության ենք առել, ժողով ենք հրավիրել»։ Բայց չէ՞ վոր դա ձևական վերաբերմունք է դեպի կուսակցական աշխատանքը, յեթե սրա հետ միատեղ աշքաթող են արել հիմնականը, առանց վորի անհնարին է խոսել վորևե կուսաշխատանքի մասին։ Կարելի՞ յե արդյոք կուսորերում, կուսժողովներում հանել նրան, վոր բոլոր կոմունիստները հաստատապես յուրացնեն կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը։ Վոչ, այստեղ դեպի յուրաքանչյուր կոմունիստը դիֆերենցիացիայի

յենթարկված, անհատական մոտեցում է հարկավոր։ Չի կարելի մի չափանիշով մոտենալ հին կադրային վորակյալ այն բանվորին, վորը ցարական ինքնակալության տարիներն անց է կացրել արտադրության մեջ, այն բանվորին, վորն արտադրության մեջ աշխատում է 10-15 տարի կամ է լայն բանվորին, վորը նոր է միայն յեկել գյուղից։ Պետք է կարողանալ դիֆերենցիացիայի յենթարկված մոտեցում ունենալ դեպի կուսակցության յուրաքանչյուր անդամը, նրանցից յուրաքանչյուրի հետ պետք է հիմնավորապես աշխատել, վորպեսզի նա իսկապես կարողանա ավանդարդային դեր խաղալ, ըստ վորում յուրաքանչյուր կոմունիստի հետ պետք է առանձին աշխատել վոչ միայն արտադրության մեջ, այլ և արտադրությունից դուրս։

Արդյոք շատ կան կուսկոմների քարտուղարներ, վորոնք սովորություն ունեն իրենց սպասարկած կուսակցության անդամների և անկուսակցական բանվորների շրջանում լինել՝ արտադրությունից դուրս։ Հավանական է,



վոչ։ Իսկ մինչդեռ կուսակցական աշխատանքում չի կարելի սահմանափակվել ժողովում զեկուցելով, պետք է կարողանալ աշխատել կենդանի մարդկանց հետ։ Կուսկոմի քարտուղարը պետք է այնպես անի, վոր նրա յետևից գնան, սիրեն նրան և հարգեն կոմունիստները, վորպեսզի լսեն նրան անկուսակցական բանվորները։ Ահա թե ինչպիսի կուսաշխատանքի մասին է խոսքը։

Մենք կանոնավոր կերպով կուսկոմների պլենումներ, շրջկոմների պլենումներ, բագկոմի պլենումներ, ակտիվի ժողովներ ենք հրավիրում։ Մենք հաճախ ենք հավաքվում և նիստեր ենք ունենում վոչ սակավ։ Բայց դրանում չե կուսակցական աշխատանքի հիմքը։

Պետք է, թեվերը սոթելով, բոլորի կորեն ձեռնարկել կուսակցական աշխատանքի, ձեռնարկել վոչ թե ձևականորեն, վոչ շաբլոն կերպով, այլ իսկականորեն աշխատանքի ձեռնարկել յուրաքանչյուր կոմունիստի հետ։ Պետք է ճիշտ մոտեցում գտնել դեպի յուրաքանչյուր կոմունիստը, ուսումնասիրել նրա կուլտուրական-քաղաքական մակարդակը, անհրաժեշտ դեպ-

քերում կցել նրան ավելի ուժեղ ընկերոջ և այդպիսով գործնականորեն ոգնել նրան մասսաների ավանգարդում լինելու համար։

Այսորվա նիստը պետք է կուսակցական աշխատանքի լայն և խորացրած ծավալման սկիզբ դնի։ Մենք պարտավոր ենք ամբողջ Բաքվի կազմակերպությունը, Բաքվի բոլոր բանվորները շարժուն դրության մեջ դնել։ Ուրեմն, ավելք, բոլշևիկորեն ձեռնամուխ լինենք աշխատանքի իսկական վերակառուցմանը գրուպայում, շրջանում, ամբողջ Բաքվի կազմակերպության մեջ,—այնպիսի վերակառուցման, որն ապահովի մեզ՝ վերացնելու մեր պարտքը և կատարելու մեր սրբազան պարտքը յերկրի առաջ, կուսակցության և նրա մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ առաջ։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. ՈչՑՈ. ԲԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0187005

95 г

Գինը 15 կ.

М. Д. БАГИРОВ

# За действительную перестройку партийной работы, за ликвидацию задолженности по нефти.

ПАРТИЗДАТ
Баку—1934